

ՕՐԵՓԻԿԱ

ՀԱՅՐԵՆԵԱՅՑ

Ինչ որ խմբագրութեան եւ Տեղօքնութեան կը վերաբերի պէտքէ ուղղել առ ՊԵՏՐՈՍ ԲՈՐԹՈՒ ՔԱՅԱՅԱ, Պօլսա Մէջանը Խմամ - Ալի Խան, թիւ 4 : — Անգար նամակ կամ ծրար կը մերժուի : Օրագիրն ամեն շաբթու հինգչաբթի օրերը կը հրատարակուի : Աւազմուայ շղանին գինը 20 դուրաշնոց արծաթ մշտին կանչուի վճարելի, ամէն, թիւէ կրնան ստորագրուի : — Դուրս երթալիք Օրագրաց ձամբու ծախըը առնողն վրայ է : — Ծանուցման առող 4 դուրս :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԿՐԵԱՌՈՒՎՎԱՆ - Կ. ՊՈԼԻՄ Օրագրայ գրամենեակը : — Թիֆլու ՄԵծարգոյ Ազգասնդր աղա Երկյեսն : — Զմիւռնիս Արշալուսյ գրամենեակը : — Թէքիրասաղ Պ. Թագւոր Ֆելլեան : — Կէյվէ, Օթմաղեւդ, Ղընջըար Պ. Խաչատուր Մանուկյեան : — Տրապիզոն Պ. Խաչատուր Էլմասեան : — Հաշէպ, Պ. Յ. Ս. Քիւրքչեանօք :

ԸՆԴԱԿԻ

Բերկրութեամբ սրտի կը ծանուցանք, որ Պոլսոյ թաղական խորհրդոց կազմութիւնը լմնցաւ . կը յուսանք որ այսօր վաղո՞երեսիխանական ընտրութիւնն ալ կրօկսի, և այն ալ շուտով կը լմննայ, եթէ կիշքի տեղ միայն կարծիքները խօսին, և այն ալ լմդհանուրին շահուն՝ օդտին՝ ըարւոյն և պատւոյն նկատմամբ միայն :

Վանէն Արդոյ բարեկամի մը գլուխած նամակի մը մէջ, տեղւոյն գեր. Առաջնորդին նկատմամբ դանդատներ կը կարդանք : Յաւ է մեզ արդարեւ երե վիճակաց հոդեւոր համիներուն նկատմամբ դանդատներ կը լսենք :

Յեշեալքաղբին իշխանները խնդ ժողովուրդը հարստացարող ըլլանին արդէն լսած եւ քանիցս ալ անոնց համար ազգային Վարչութեան բողոքներ եկածէ : Զըդ գենք հոսաղդային Ա արշութեան ըրածը կամ չըրածը, այլ մէնք աւելի ասոր համարցաւ կը զգանք ար Առաջնորդն ալ ժաղավարդը հարստահարող իշխանաց

պաշտպան կը կենայ եղեր :

Թող ներէ մեղ գեր. Առաջնորդը զորցելու, որ իրենց նուիրական կարծած պաշտօնը այս չէ, թէ ար պէտք ըլլայ ուրիշ անդամ այս նիւթիս վրայ աւելի պիտի խօսինք :

Կը լսենք որ Եւգովիոյ գել. Առաջնորդը Պոլսոյ Պատրիարքութիւնը ձեռք բերելու մեծ փափագ մը ունի եղեր, եւ իր այս փափագը լիցնելու համար ալ Պոլոյ մէջ ունեցած գործակատարին ձեռքովիլ իր նպատակը յաջողցնելու փորձեր կը փորձէ եղեր, եթէ խաղաղու Տէրը յաջողցնելու ըլլայ իր առուբ, առ գօդուոր եւ նուիրական նպատակը :

Կարելի է որ չէ կը զեր ըմբռնել տակուին յիշեալ գեր. Եպիսկոպոսը՝ որ այն օրերը իրիկուն եղած են արդէն . վասն վասն զի հիմն դործողն ու խօսողը ընդհանուր Ազգին կամքն է :

Հասկցողին համար այսչափս բաւական է :

Կը լսենք որ կտուց անապատի վան.
Քին վանահայր՝ Պօղոս վարդատետը՝ միշ-
եալ վանքէն երկու անգամ քառասուն
ական հազար զուրուշ առնելով՝ քաղաք
գացեր է :

Հասարակութիւնը հետաքրքիր է ի-
մանակ թէ՝ արդեօք Տիգրանեան Մկըր-
տիչ վարդապետին դատաստանը ինչպէս
տեսաւ. Ազգային Վարչութիւնը և թէ՝
ինչը ըրտւ :

Պատուական Մասիս լրագրույ 398
թուոյն մէջ « Գրացանական ժանուարան » վեր-
նագրով յօդուած մը՝ քահանայական բա-
րեկարդութեան հսկող աղքօքուա ժո-
ռողով պաշտպանելով՝ այս ժողովոյն նը-
կառամամբ խօսող լրագիրներուն ըրած
խօսքերն ու դիտողութիւնները « յախո-
սըն յարձակում » կանուանէր :

Արդարեւ կը գովենք իսաւան ժողովը՝
որ ազգին ամենէն սիրելի գոգացուածը
կուզէ պաշտպանել. ստիայն եթէ ներ-
ուի մեղքսելու, մեր ըրած խօսքերն ու
գիտողութիւնները ոչ մատուար եւ ոչ «
բոլոր քահանայութեան» պատոյի. « դէմ
առարկութիւններ են ». մեր գրտծ յօդուա
ծը ի՞նչ ոգուով գրտած ըլլալը՝ զայնու-
շադրութեամբ կարդացող ազգայինք
կրնան իմանալ :

Այս որ պատիւն ու շահը է իսուի,

հնա երաւանակը է լուե :

Ըստ սահմանադրական իրաւանց՝ ի-
րաքանչելք անհամանեցն իրբեւ մէկզմէկէ
անկախ մարմիններ մասածելով՝ յայնի է
որ իւրաքանչիւրն ալիք ազատ կամքը՝ իրա-
ւունքը, պատիւն ու շահը ունի և հարկ
է որ ունենայ այս ազատութիւնը, զոր
շնորհածէ ազատութեան գերազայն չե-
ղինակը :

Սակայն երբ ինդիքը ընդհանուրի կը
վերաբերի, հնա ամեն անհամաներու պա-
տիւն ու շահը, կամքն ու իրաւունքը ընդհ-
անուր պէտք է ըլլայ», այսինքն՝ ընդհա-
նուրի նկատմամբ եզրու ինդիք մը մաս-
նաւորելը, կամ զայն իր շահուն՝ պատ-
ոյն՝ կամացը և անհատական իրաւանցը
սեպհականելը, ըստ սահմանադրական
իրաւաութեան՝ ընդհանուրին օգտին՝
բոլորին՝ կամացը՝ շահուն և իրաւանցը
դպչի և վնասուի է :

Մեր ազգին քաղաքական անցեալ և
արդի վիճակը այս զեղծմանցներէն ընաւ-
ազատ չէր, և չէր իրնար ըլլար, քանի որ
իր Գաղըական վիճակը՝ սահմանադրա-
կան այն ընդհանուր սկզբունքէն» տար-
բեր եղանակաւ էր :

Հիմա՝ որ մեր ազգը սահմանադրա-
պէս կառավարուելու կեղանակաւորի՝,
տակաւին շատ զուրկ է այն ամեն ընդ-
հանուր սկզբունքներէն, որոնք սահմա-
նադրական ժողովարդի մը յատիւութիւն-
նելին են. Հոս մեր պահանջանքը՝ մեր ազ-
գին քաղաքական արդի վիճակին նկատ-
մամբ անիրաւ պահանջում մէկ. սակայն
խօսքերնիս մասնաւորելով՝ դարձեալ ե-
թէ մեր բուն առարկութեանը դարձնանք,
զոնէ աս փոքրիկ միսիթ արութիւնն ալ
պիտի զգտնանք, որ ընդհանուրին շա-
հուն՝ պատոյն իրաւանցն ու կամաց
առջև մասնաւորը կը լուէ :

Այս ընդհանուր սկզբունքը՝ ինչպէս
կերեաց, տակաւին շատ զուրկ է ընդհան-
րապէս մեր ազգը խորհուող ու գործող ժո-
ղովուրդ մը ըլլալու պահուական յատ-
կութիւններէն :

Այս ըստանիս մեր ազգին քաղաքա-
կան արդի վիճակին մէկ համաստ ուր-
ուագիծն է :

— Անցնինք մեր ազգին տակաւական
վիճակը քննելու :

— Հոս առանց այլ այլ առարկութիւն-
ներ մէջ բերելու, միայնակ փոքրիկ հա-

ըլք՝ ալ անհաւատ՝ և իր սկզբանը համեւ
մատ՝ վկայութիւններն ալ անմոգունելի են:

Նարուակելեւ:

Հետեւեալ նամակը զրկուած է մեղ
հրատարակելու խնդրանոր:

Վեճարգոյ խմբագրապետ.

Չեր պատուական և ազգօգուտ համ-
դիսին մէջ նամակին փոքրիկ անկիւն մը
շնորհելու քարեհաճեցէք:

Կիլիկիայ հանդիսին 13դ թուոյն՝
առանց ստորագրութեան նամակի մը
մէջ՝ քահանայից «իրաւամը, ցատւ-
ցիչ» մէկ գործքը կարգացնեք. որ է
որուակէն անմիջապէս ետքը զինի օրհնե-
լով մատուակելնին. Սովիկա կարծեմ
ցատւցիչ կամ զայրացուցիչ կամ որ է
կիրք մը շարժիչ բան մը չունենալէն զատ,
ուարուականութիւն մի է քահանայից՝ իրը
արարողութիւն մը հարսանեաց անհրա-
ժեշտ կերպով կատարելու. բանդի տուղ
միայն լրւաւորչական եկեղեցին Քրիս-
տոնի՝ կանայ գալելեացւոյն հարսանեաց
մէջ, Տիրամօրը խնդրանօքը ջուրն՝ ի գի-
նի փոխելուն հրաշագործութիւնը կը յի-
շատակէ. Հետեւագար ինչպէս ուրիշ տ-
րարողութիւններ՝ նոյնակէս ալ այս և ոչ
մէկու մը տժգոհութեան կամ անքատ-
ուութեան պատճառ. է կամ կընայ ըլլալ
ըստ մէր կարծեաց :

Դիմի հանգանակութեան գալով՝
իրարանչիւր անհատ քսակն ըստ իւր
համոյից մատակարարել, իւր անքոնա-
րարելիք իրաւունքն է. եթէ կամենայ՝
հաղինօի մէջ էն քիչը վատնած ստակին
100ին 10ը հանգանակ մը կուտայ կամ
ոչ քահանայն իրաւունք չունի զինքը ստի-
պելու:

Բայց իմ եւելոք զարմանքս սա եղաւ.
որ նոյն նամակին բժախնդիր հեղինակը
էլեր կրօնական վարչութեան ուշադրու-

թիւնն ալ կը հրաւիրէ այսպիսի ամենա
շըւըւը խնդրոյ մը վրայ : Այս փափաքէի
որ մէկ քանի օրէն քահանայից փռնկառա-
լու. կերպին վրայ ալ վարչութեանց ըլ-
բողոքէր :

Մասմ անձնուեր

* * *

(Նարուակակութեան և գլուխ Տէ թիւ 24)

«Ասլանեան եղբարք, որոնք այսօր Ա-
ւըսդիւական շոգենաւով Պոլիս դային, մի-
» այն 43 ֆորանք կրցեր են ժողուել, որով եր-
» կու հատ աշխարհաբառ. 1 Տէլմաք եւ 2
» հատ համառօտ Հայոց Պատմութիւն գնե-
» ցին և յանձնեցին ինձ, իրենց նամակով մէկ-
» տեղ, որ ձեզի խրկեմ, յանձն առնելով նպն
» գրոց ծրարին վրայ չենք անունը նշանակ-
» ուած՝ յանձնեցի գաղղիական փառթային.
» Ասլանեան եղբարք կյուսային որ երեք Տէ-
» լէմաք գնելու չափ ստակ չկրցան ժողուել,
» անոր համար մնացած մէկ հատը, Պօլիսէն
» պիտի խրկեն առ ձեզ. 2 Տէլմաք՝ հստը
» 37 ու կես ֆռանք, 53 : 2 Հայոց պատմու-
» թիւն եւ ծրարին ճամբու ծախմբը փռանք
» 8, զումար փռանք 45 : ժողուած ստակին
» դումարն է փռանք 45 : Ընդունեցէք, եւ
» այն : »

6 յուլիս 1863

Պ. Հայրապետ
Զմբւոնիս

Յ. Նահավերեան

Գիտնալով որդէն Փարիզարնակ Արժա-
նապատիւ. Ա. Ա. Գալֆակեանին Զէլմունի
ընթերցարանին նուիրած յիսունէն աւելի
գրքերը եւ հետեւցնելով ալ թէ անշուշտ
Տէլմաք ալ ըլլալու է. հիմակու կիմա կը
խրկենք տանք Մարտի եւ Համբինի
դպրոցաց աւելցնելով անոնց վրայ մէկ մէկ
աւանձնուեր ազնիւ Պ. Արմենակ Հայկունի-
ին աշխատափրած Ելիսա եւ Գերեզմանք
Երիտասարդացին ու Բինկեանցի Աւագեան
ազնիւ Տէր Գանպարին աշխատափրութեամբ
ու արդեամբը ՚ի լցո ընծայուելով ձրի նուի-
րած Սոլութեանց գրքուկներէն. եւ
թէ մեր այլ եւ այլ տեղեր գրած աղերսնե-
րը ու կրապարակաւ առաջարկութիւններն
ալ մեր ակնկալութիւնները պատկեն ու կ.
Պատոյ Ղալաթիայի, Ա. Գրիշի բարեկարգ

գործոցին յառաջադէմ եւ աղնիւ պատանիք մեզի ըրած գրաւոր խօսումաւնքնին իրօք ալ կատարեն, անշուշտ ունեցաւ ան ստեն Մարշը, Զէ յթունը եւ Համինը այն կատարեալ ընթերցաբանները՝ որ հարկաւոր է ունենալ:

Մի ձանձրանաք աղնիւ ընթերցողք, մեր ոյս մաւրացիկ ձայնին որ միշտ մեր տիրոջ ձայնին պէս տուր տուր կհնջէ. Բ ինչ ըստեմք ահա վարչութիւնը մեղի համար ականջ չունի. Սահմանադրութիւնը մինչեւ մեր հաստատութիւնը ասնէ, մեր ալ կենդանի մարմնը հողը կը մտնէ, իրաւ ունիմք շատ կարող ազգայինք, որ եթէ ուզեն կարող են ամեն մէկը մէկ մէկ կազմարեան եւ խաղիպեան հանդիսանալ եւ Սղգին կենդանութեան հոգի տալ, բայց անոնք ալ . . . դարձեալ ու ունինք Տառեան մեճապատիւ Յարութիւն է ֆինափի նման ազդեցութեան տէրեր, որ երկու տող նամակաւ մը Ցիդրանտկերու Քաղթէացի մոռացման մէջ ընկզմած ասկաւաթիւ Ազգին ուժուուն արկղ զանազան տեսակ, գրեանք. մասնաւի, տպագրական եւ եկեղեցական նիւթք ազտա որ եւ իցէ մաքսական տուրքէ ֆարիզէն ամսորդել մինչեւ Տիարացքի կերպայ, բայց չունինք ան աղդամիրաթիւնը որ գոնէ գործոցական գրեանց մաքսի ծափաք չնորուիլ խնդրէ բարեսէր կառավարութիւնէն, որ արդէն թոմիկադին զրեանց գինը նովաւ կրկնուալստիկելով՝ անհարին կըլլայ աղքասա գաւառականոց ձեռքք անցնիլը, թողելով այս ասարիաները վսոի զի « լող չիսայ » վերջացնենք մեր գրաւթիւնը նուիրելով մեր անմուազի երախտագիտական շնորհակալութիւնը բրօրականա տիսյի գործոցին աշակերտ աղնիւ պատահեաց :

Սամամք որ եմք միշտ սիմելի Ազգին յառաջադիմութեամբ ցամկացու:

Հաղեալ 12 յուլին

1862

Առառաջադիմէն այս անդամ տիսուր լուրեր կը հաղորդեն մեր:

Քաղաքին ժողովուրդը մեծաւ մասմք վրդովեալ է, եւ այս վրդովման պատճառն ալ բատ մեղ անտեղի է. վտան զի Հայ հատարակութիւնների վեր:

Մին ու միակ յոյսը վարժարաններու վըրայ գրած ատեն, երբէք չկրնար հան գուրծել որ վասժարվետ մը ուզուելու կամ չուզուելու համար խնդիր յարուցանելով՝ դարոյցը երեսի վրայ թողուի:

Նախատինք ամեն անոնց՝ որոնք աղդային հոգերը վրանին առած ատեն, յանուն աղդին մէջ վրդովմունք կը յարուցանեն:

ԻԼՏԵԿՈՆՏԱ

Տես թիւ 22

ՄԱՐ. (Առանձին) Ըսելու խօսք չունիմ, իր ողորմելի տեսութիւնը զիս բոլորովին բժացուց :

ԻԼՏ. (Պաշտամական հայութ և աշխատանք գումարի և բանական) Տէր, ինչու համար զիս անուննել ուղեցիլ :

ՄԱՐ. Խափեկոնտա . . . զիս հոսք բոլոր տեսմանիր քերի հաճելի չէ :

ԻԼՏ. Տէր . . . :

ՄԱՐ. (Երկու առաջ յառաջ գալով) Ինչու պատասխան չես տար :

ԻԼՏ. (Երս Երս Երթացն) Կաղաչեմ . . . որ . . . :

ՄԱՐ. Հայրէ անուննելը քերի տակի է :

ԻԼՏ. Հայր :

ՄԱՐ. Ինչու այս անուննեն կը զարդիս :

ԻԼՏ. Ես . . . այս . . . կը զարհութիւն . . . բարէ, զիս թող կաղաչեմ : Այս կերեզմանիս մէջ ուր զիս գատապարտեցիլ, զիս հանդիսա թող տէր :

ՄԱՐ. Կեցիր . . . ես եկայ որ . . . :

ԻԼՏ. (Պատահ ծափեցն) Եկար որ կատարութեանդ յաղթանակը տեսնես, Ահա յաղթանակէ, հիւծեալ դէմքս, կկոցեալ աշուրներս, այս սոսկափի հանդերձները, չորս տարուան բանս մը . . . :

ՄԱՐ. Բայց յանցանիր . . . :

Իւս . Ե՞ս յանցաւոր եմ . . . ես թից-
յարոյին միրոյն դէմ մահու չափ , կը
մարտնչէի , եթէ մայրս հաւանութիւն
տուած չըլլար . (Էնդանագրէն նայելով)
այն մեր ամուսնութեանը հաճութիւն
տուաւ , մեր սրբազնն կապը այն կըն-
քեց , եւ երբ դասկիս մայր եղայ , զա-
ւուկո ինքն օրէնեց , եւ յետոյ . . . ով-
անդթութիւն , գթած մայրը լլալն՝ անոր
թշուառ մահուանը պատճառ եղաւ :

ՄԱՐ . Մայրու . . . :

Իւս . Իսկ ես անոր հնազանդ ելուս
համար՝ քու բերնէդ այն սոսկալի խօս-
քերը լեցի , որոնք դեռ ականչիս կը
հնջեն . Անզգամ . . . չարագործ իին .
ըսկի ինձի՝ յաւիտեան ինձմէ հեռու կե-
ցիր , խայտառակութիւնը քու բաժինդ
ըլլայ . մշտնշենաւոր բանաւ մը՝ բնակա-
բունդ . եւ անէծքս միշտ ետեւէդ դայ .
Աստուած իմ , Աստուած իմ , առ սոս-
կալի անէծքները քանի կը յիշեմ , զղերս
կը ցնցուին՝ սարառումը կը զգամ , եւ
մազերս դիմուս վրայ կը ցցուին :

ՄԱՐ . (Ի խորդ որոյ հասաւէլու) շոր-
ծ , ինչնիւն բուռն ընէլու :) կեցիր , իւ-
տեկոնտա , եւ ինձի մոխի ըրէ : Քեզ
աեսնելու՝ ոնեցած գորովական ըդ-
դացումն խօսքով չեմ կրնար յարունել . . .
բայց պէտք է որ խօստովանիմ , քեզի
հետ շատ խատիւ զարուեցայ , բարկու-
թեամս կիրքէն սոստիկ յախշտակուե-
ցայ , բայց քու կերպարսնէդ ոչինչ
ընդհատ դեղնած ու տկարացած դէմ-
քէս յատնի կը տեսնես : Որդ մահը . . .
որտիս մէջ սոսկալի ցաւեր յարուցին , որ
զիս չարաչար կը տանջէն . . . ու զուար-
ծութեան սոտերն անդամ ինէ հետու
կը փախչի . շարունակ թափսութեան ու
տառապանաց մէջ եմ : Քանի քանի ան-
գոտ միաբա եկաւ որ գքեզ ոյս տիվրու-
տեսիլ բնակարանէն հանել ուամ , ու
գքեզ հայրական գրկաց մէջ գգուեմ :

Լեցին այն մարդկային նկատումները ,
այն բանաւոր ամօմթը , որոնք մարդ նա-
խապաշարեալ ընկերութեան գերի կը-
նեն : Եւ այնչափ աւելի սոսկալի գերի ,
որչափ աւելի հարուստ է : Հիմա երկու
քըս ալ ուրախ ըլլանք . քանզի երկնային
նախախնամութիւնը մեզի միակ միջոց
մը կ' չնորհէ որով կրնայ եւ գքեզ առ
պատերուն մէջէն ազատել . ու նորէն
հասարակաց համարմանը արժանի ընել :

Իւս . Ի՞նչ միջոց :

ՄԱՐ . Պիհասգոյի իշխանին՝ Վիթ-
թորին հետ ամուսնութիւնդ :

Իւս . Ի՞նչ կը լսեմ :

ՄԱՐ . Բօնիէրօն քիչ մը տուած քեզի
յայտնեց :

Իւս . ինձի . . . :

ՄԱՐ . Այսո , եւ զիս հաւանեցոց թէ՝
դու այս ամուսնութեան հաճութիւն
տուած ես , եւ անոր հետ՝ այս զիշեր
Պիհասգոյ երթալու պատրաստ ես , ա-
նոր համար ալ դիմով հաւանութիւնն ա-
նոր տուի . զիս ալ համոզել ուղեց որ
գքեզ տեսնելու չդամ , որպես զի ըլլայ
որ խոռվիմ . բայց կը խոստանամ որ ես
ալ վազը ձեզ պսակին ներկայ գտնուե-
լու համար , անձամբ զինասպոյ կուգամ :

Իւս . (Հօրը խօսեին հետայածք ֆոք դը-
նէլու) ինձի համար պըսակ . . . :

ՄԱՐ . Այսո Վիթթորը աղեկ կ' հանչ
նաս , աղնիւ առաքինի եւ բարի է , բայց
այդ ինչ է : խոռվեցար . կը դոզան . . .
պատասխան չես տար :

Իւս . Ես նորէն ամուսնանամ :

ՄԱՐ . Կը ոտէկոնտա :

Իւս . Ես . . . որ . . . ոչ գաղլեցէք՝
կաղախմ . . . զիս թուղ տուէք , իմ սոս-
կալի վիճակը նոր նոր անձկութիւննե-
րով մի դառնացնէք :

ՄԱՐ . Աղջիկու . . . :

Իւս . Մարդկային վիշտելը սահման
մը ունին , այս , սահման մ' ունին : Իմ
վիշտերու ալ անտանելի եղան :

ՄԱՐ. Բայց թօճիէրօն . . . :

ԷԼՏ. Թօճիէրօն սուտ ըսած է :

ՄԱՐ. Աս ամուսնութէնէն . . . :

ԷԼՏ. Ես կը դարձիմ :

ՄԱՐ. Կ'ուղե՞ս որ . . . :

ԷԼՏ. (Արտիո-Աւանք) Կ'ուղե՞մ կետնիքս հոս վախճանել . հոս կենդանւցին թաղուած՝ հեծել, լոլ, տագնաւզել . հազար անգամ մեռնել . բայց երդմանս եւսիրելսոյն թեցարտօյն հաւասարիմ մարտի մեռնի :

ՄԱՐ. (Բարիանանչ) Ուրու անոնքը կուտաս :

ԷԼՏ. Ամուսնոյս . Աիրելոյս :

ՄԱՐ. Անդգամիք :

ԷԼՏ. (Կենդանադրին առջև բաղկառաւած) Ելք ինդրիմ որ միտքդ փոխես :

ՄԱՐ. (Հանդարտեցն) Եր ինդրեմոր միտքդ փոխես :

ԷԼՏ. Ե՞ս :

ՄԱՐ. Կ'աղաչեմ :

ԷԼՏ. Միտքս փախեմ . . . անկարեցի է : Ես յեղյեղուկ սիրահարի մը ցած կիրքովը չեմ խօսիր, այլ տմուշնոյ մը, մօր մը հրամացող ձայնովը : Ամուսնոյ եւ մօր Արքական անունները, սրտիս մէջ այնպէս տպաւուած են, որ մոհն անգամ կարող չէ եղանել :

ՄԱՐ. Բայց խորհէ :

ԷԼՏ. Թող անդութ թշնամիներուս անողոքելի կատաղութիւնը զիս հալածէ, իմ արդար դատիս զօրութիւննու պաշտպանը Աստուած՝ Աստուած՝ որ հարստանարեալ անմեղութիւնը պաշտպանելու համար կրնաց գերեզմաններն անգամ բանալ. մեռածները կենդանացնել, եւ իմ արտասուալից ջերմեռաններն աղօթքներուս լսելով՝ Պաղեստինէն ողջ նորէն կը շնորհէ : (Ասուրի ուրախութեան է իւ յայտնէ :)

ՄԱՐ. Ի՞նչ կըսես, ողջ . . . Թիցցարտօն ողջ քեզի շնորհէ :

ԷԼՏ. (Արյն ուրախութեանք) Այսու . . .

Աղջ :

ՄԱՐ. Իմ բողոք չարեացս պատճառը :

ԷԼՏ. (Հօրը Յայնուն) Իմ հալածեալ, անմեղ ամուսինս :

ՄԱՐ. (Բարիանանչն իջնալով) Բայց դուն կը սխալիս, աղջիկս . Թիցցարտօն մեռած է :

ԷԼՏ. (Հեգիան ժողովով) Միունած :

ՄԱՐ. Ստոյդ է . կուռելու տահնը, վիրաւորուած ինկաւ : Հոս գործող արհեստաւորները վկայ են : Մակը . . . ներու եկեք . . . :

ՏԵՇԱԲԱՆ Գ .

ԻՆՑԱՐԾՈՅ ԿԵՐԴՈՅ ՖՐԱՆԶԵՍԳԵ

ԺԵՏ ԺԵՏ ԿԵՐԴՈՅ :

ՄԱՐ. (Արդիու թեցարտօյն հետեւ բանելով և առջնանը ներկայացնելով) Աղջիկս նախ կը ունի կամուզէ, պարոն պատմէ՝ թէ ինչպէս թիցցարտօն Պաղեստին քու դիրիդ հոգին տւանդեց :

ԿԵՆ. Վտանգաւոր վայրկեան : (Բշշարտօյն սովունք :

ՏՐԱՆ. Սոսկալի լուսէ :

ԷԼՏ. Թիցցարտօյն : . . . մեռնելը . . . տա . . . տեսան :

ՄԱՐ. Խօսէ, խօսէ . . . (Պարհանար սարսափ և լսութեան) Բայց ի՞նչ կայ . ըստ կրկնեաս, եւ երեսս ՚ի վեր կը նայ յիս (Ասուրինն) դուն ուլ ինչպէ համար ամնալով անդին կը դառնաս : (Իլուեկա արտօյն .) Խըսեկանտօն ի՞նչ է պատճառը որ այսպէս կը կենաս . ինչու կ'խոռովիս :

ԷԼՏ. (Գետուանէրը հեեւն Բուլը Յայնուն է իւ պատասի) Ներէ . . . Թիցցարտօյն ներէ :

ՄԱՐ. (Ամենան երեսը նայելով) Ետք աղջնանն ուստինալով) Ի՞նչպէս կրնաց ըլլըլ որ . . . :

ԷԼՏ. Այսու, այս, ողջ է :

ՄԱՐ. Բայց անոր մեռնելը . . . :

ԷԼՏ. Ստոյդ է :

ՄԱՅ. (ՄԵՋԱՅՊՈՅԲՆ ԷԿԱՔԱՆԱԼՄՆ) ԴԱՌ
ԻՆԾԻ ՀՐԱՄԻ ՈՐ . . . :

ԻՒՏ. ՍՊՈՎՈՒ Է . . . ԾԵՍՏԱՐՈՅՆ Մ
ՄԱՆՖՐԵՇ, ԵՐԿՈՎՅՆ ալ ողջ են :

ՄԱՅ. Ի՞նչ յանդգնութեամբ զիս
ԽԱՐԵԼ ուզեցիք :

ԻՒՏ. (ՆԵՂԱՆԱԽՎ) ԵԱ . . . :

ԿԱՅ. (ՇՈՏՈՎՈՎ ԽՈՏԿԵ ԲԵՐԵՆԵՐ առանելով)
ԶԵՐ պարատէն դուրս ելլելն ետքը ի-
ՀԱՐԱԿԱ :

ՄԱՅ. Բայց սակայդ է :

ԻՒՏ. Տարակոյս չկայ . . . այսօր եր-
կուքն ալ ճամբան տեսանք :

ՄԱՅ. Ի՞նչ կը սես :

ԻՒՏ. ՈՐՀԱՎԻ ԽՆԱԴ-ԱԳԻ , ԵՐՄԱՐ տեսայ :

ԿԱՅ. (ՄԱՐԴԵՆԵՆ ԲԱՐԴ-ԱՄԵՆԵ ԽԵ-
ՆԵԼՈՒ համար) ՆԵՐԵցէք տէր ; ԾԵՍՏԱՐՈՅԲՆ
ԽԱՐԵԿԱՆՆ ԸԼԱԼՈՆ համար . . . :

ՄԱՅ. Ուրեմն թշնամիս կենդամի՞ է :

ԻՒՏ. Ան որդինդ է , զաւակդ է :

ՄԱՅ. ԹՀՆԱՄԻՄ Միւլան գայ , ավ-
գժբաղդութեանս . . . բայց քու կեր-
պարանքդ ինծի զարմանալի կերեւայ ,
կարմեցար աչուլներդ կրակի կորեցան . .
վախնամ . . . գուն եռ ԾԵՍՏԱՐՈՅՆ :

ԿԱՅ. ՏԵՐ , ի՞նչ զարմանալի կար-
ծիքներու կ'երթաք :

ԻՒՏ. ԾԵՍՏԱՐՈՅՆ կրնայ կուելուէ-
րանո Մարդկոյն ներկայանալ որ անոր
անհաշտ թշնամի է :

ԿԱՅ. Քօնիերօյն անողոքնիլի բար-
կութենէն անսարակոյս կ'վախնայ , Քօ-
նիերօն՝ ով անոր մահուանք ծարաւի է :

ԻՒՏ. Նորէն կրնար կեղեքնել ան ինդ-
ճը , ինչպէս գիշեր մը դարան դրծե-
լով գաշոնմը Հարաւար վիրաւորեց :

ՄԱՅ. (ՈՐ ԱՐԵՑՆԵՐԸ ԾԵՍՏԱՐՈՅԾԻ ԵՐ-
ԱՃ զար առած չէ :) Յայտնէ . . . ըսէ
դուն եռ ԾԵՍՏԱՐՈՅՆ :

ԻՒՏ. Բայց ԾԵՍՏԱՐՈՅԾԻ ինչ կուզեք :

ՄԱՅ. Ամսւանոյս վրէժը , որ անոր
պատճառավը մեռաւ :

ԻՒՏ. Անագորդին կատաղութիւնմ չէր

անոր մահուանք պատճառը :

Շարունակելն

Հանդիսիս գրասենեկին մէջ Վիճու-
նայի վանքէն ելած հետեւեալ դրբերը
կը ծախուին :

Քառական	Անուն	Անուն
Աշխարհագր	Հ. Պօղոսի	7 75
"	Հ. Աղեքսանդրի	3 70
Բնադիտուի	փորձառական	9 45
Բնական պատմուի	Համոոր	10 45
Երկրագործութիւն		3 20
Ատորագրուի	Վիճնայի	2 50
Վակների	ճանատարհորդու- թիւն ՚ի Հայ .	4 20
Կարագիր	աւամնաց	2 20
Գիսութիւն	տէրութեանց	2 40
Գիսութիւն	վաճառականուէ	3 20
Պատմութիւն	քաղ . Եւրոպա-	
Կոն Տէրութեանց	4 Համոոր	12 80
Գործնական արուեստախօսութիւն		3 30
Օդերեւութարանութիւն		4 25
Առողջապահիկ կանոններ		— 75
Հյահանկ աստեղագիտուէ		2 —
Քերականութիւն	Զալբխեան	2 25
Բառդիքիք Գաղ . ՚ի Հայ եւ . ՚ի Տաճ .		14 —
Բառդիքիք Տաճ . ՚ի Հայ .		10 —
Պատմութիւն Հայոց		4 20

* Յիշեալ գրքերէն զաա՝ ուրիշ գրքեր որ
կընանք բերելատը խիստ քիչ օրուան մէջ
եթէ ուզուի :

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԱՅ

ՄԻԾԱՍ Մ. ՀԱՅԿ ԳԱՓԱՄԱՃԵԱՅ ԵՒ

ՏԵՂԵՆԻԹԵԱՄԱՅ

Պ. ԲՐՅԹՈՒԵՑՍԱԵԱՅ

Կ. ՊՈՒԻՍ ԻՄԱՄ. ԱՍԻ ԽԱՅ